

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

23.09.2023 թ.

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական
ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների
դաշինքի նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների
օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի և կից փաստաթղթերի ստուգման
արդյունքների**

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական
ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքը
ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրություններին
մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը
գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում
նախընտրական քարոզչությանն ուղղված ծախսեր կատարելու նպատակով
բանկերում բացել են նախընտրական հիմնադրամներ:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական
քարոզչության ժամանակահատվածում բանկերից 3 աշխատանքային օրը մեկ,
Կենտրոնական ընտրական հանձնաձևաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ
ծառայություն (այսուհետ՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն) ստացվել են
տեղեկանքներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների,
կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում մուտքերի և ելքերի

վերաբերյալ, որոնց հիման վրա Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմվել են ամփոփ տեղեկանքներ և տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Տեղեկանքներն իրենց մեջ ներառել են տեղեկություններ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և ելքերի չափերի, դրանց ժամանակագրության, ինչպես նաև հիմնադրամում մնացորդների վերաբերյալ:

Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը, 20-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ քան 3 օր առաջ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներակայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և պայմանագրերը: Հայտարարագրերն իրենց մեջ տեղեկություններ են ներառել նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների ժամանակագրության, նվիրատվության գումարի չափի և նվիրատվություն կատարած անձանց մասին, ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի և դրանց ժամանակագրության, ձեռքբերման ծախսերը հավաստող փաստաթղթերի, դեռ չվճարված պարտավորությունների չափերի, ինչպես նաև հիմնադրամի միջոցներից վճարված, սակայն հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի մասին: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում նվիրատվությունների և ծախսերի վերահսկողությունն իրականացրել է՝

- Բանկերից ստացված տեղեկանքների (ստացվել է թվով 126 տեղեկանք)

- Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված հայտարարագրերի (ստացվել է թվով 42 հայտարարագիր)

- Հիմնադրամից կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի (ստացվել և համադրվել են թվով 421 պայմանագրեր, 147 հաշիվ վավերագրեր/հաշիվ ապրանքագրեր և 450 վճարման հանձնարարագրեր)

- Ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ նախընտրական հիմնադրամներում առկա է ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտների կողմից նախընտրական հիմնադրամ նվիրատվության գումարի առավելագույն չափի գերազանցում՝ 520 000 դրամի չափով, անանուն նվիրատվություններ՝ 350 100 դրամի չափով և ընտրելու իրավունք չունեցող անձի նվիրատվություն՝ 76 500 դրամի չափով, որոնք փոխանցվել են պետական բյուջե:

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Մասնավորապես՝

- «Հանրային ձայն» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 20.09.2023 թ.-ին մարել 785 000 դրամի պարտավորություն
- «Արդար Հայաստան» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 20.09.2023 թ.-ին մարել 500 000 դրամի պարտավորություն
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 20.09.2023 թ.-ին մարել 31 319 340 դրամի պարտավորություն
- «Ապրելու երկիր» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 22.09.2023 թ.-ին մարել 2 560 395 դրամի պարտավորություն.